

հոն: Կրօն, ոգեկանութիւն, մշակոյթ, արուեստ, մարդկային կեանքը նոյնիսկ, կը ներկայացուն իրրե պարզապէս նիւթի շարժման դիպուածներ, և հետեւաբար զուրկ շօշափելի իրականութենէ: Մարքսի տնտեսական նիւթապաշտութիւնը կ'արժեզրկէ նաեւ «Լուսաւորման» գաղափարը իր ԺԸ. դարու Բաւիւնայիսիքի մէջ, և կը փոխանակէ զայն եղափոխութեան ինքնատիպ ձեւով մը: Կ'ուրանայ, այսպէս ըսուած «Լուսաւորում»ին որ և է տեղ առաջնորդելուն, նոյնիսկ Ժողովուրդներու ճակատագրականութեան ներքին խորհուրդներուն կամ անոնց ոգեկան կեանքին լուծում մը գտնելու: Փոխանակ այս հարցերը նկատի առնելու, տնտեսական նիւթապաշտութիւնը կ'ուրանայ զանոնք իրրե լոկ պատրանական և արդիւնք՝ տուեալ տնտեսական վիճակներու:

Պատմութիւնը և պատմութեան իմաստասիրութիւնը, մարդկային դիտութիւններու ուրիշ որ և է մարդի նման, պարտին ունենալ իրենց մասնաւոր տեսութիւնը: Մինչև հիմա փորձեցինք բացատրել պատմութեան բնոյթը, իրրե տեսակարար իրականութիւն մը որ գոյութիւն ունի էութիւնը բազադրող իրականութիւններուն նուիրապետութեան մէջ: Պատմութիւնը իրեն իրրե նպատակ ունի բացարձակօրէն օրիփնալ և տեսակարար առարկայ մը որ չի կրնար ստորաբաժնուիլ իրրե նիւթ կամ ոգի: Անկարելի է անշուշտ ընդունիլ պատմութիւնը իրրե Ֆիզիոլոգիք կամ նիւթական իրականութիւն մը, ինչպէս որ չէ կարելի ընդունիլ զայն իրրե հոգեկան իրականութիւն: Պատմութիւնը իր մասնաւոր և տեսակարար բնութիւնը ունի: Պատմութեան աւանդութիւնը ընդունիլ և հաղորդակցիլ անոր հետ, անհրաժեշտ է պատմութեան տեսակարար բաղկացուցիչները ըմբռնելու համար:

ՆԻՔՕԼԱ ՊԵՐՏԻԱԷՎ ԹԵԳՄ.

ԶԱԻԷՆ ԱՅՂ. ԶԻՆԶԻՆԱՆ
(Շարունակելի)

ԼԵԶՈՒՄԴԻՏԱԿԱՆ

ՀՆԴԵԻՐՈՊԱԿԱՆ ՆԱԽԱԾՐՋԱՆ(*)

Մի ամբողջ Ժողովուրդը նշանակելու համար ընդհանուր բառ չկայ, բայց ունինք մի բառ որ տարածուած է արեւմտեան հնդեւրոպացոց մէջ (տաւտա): Թագաւորական իշխանութիւնը ճանաչում էին հընդեւրոպացիք, որ է հնիս. բեկս:

Կրօնական գաղափարները համար լեզուարանութիւնը շատ բան չի տալիս, Աստուծոյ գաղափարն ունին հնդեւրոպացիք. նախալեզուի մէջ գեղուս ներկայացնում էր Գերագոյն էակը, որ միեւնոյն ժամանակ լոյսի և երկնքի գաղափարն ունի: Հայերէնի մէջ նոյն բառի ներկայացուցիչն է սիւ, իրրե երկնք, արեւ, լոյս: Այս բառը գրեթէ բոլոր հնդեւրոպական լեզուների մէջ էլ պահուած է: Անշուշտ հնդեւրոպացիք ճանաչում էին նաեւ ուրիշ աստուածութիւններ, բայց բացի նախորդից ո'չ մի բառ ընդհանուր տարածուած չէ լեզուների մէջ. սրա պատճառն այն է՝ որ իւրաքանչիւր ցեղ ունէր իր աստուածները և պահել է միայն նրանց անունները: Հայերի մէջ պաշտուած աստուածութիւնն էր Դիք, որ հնիս. դիէս բառն է:

Աստուածները համարում էին երկնային, լուսաւոր և անմահ էակներ, որոնց հակադրում էր հողածին և մահկանացու մարդը: Այս երկու վերադիրները այնպէս յատկանշական էին, որ մարդու բուն անունը (հնիս. մանու) ջնջուեցաւ և նրա տեղ տարածուցին հողածին (հնիս. g'hmon) և մահկանացու (հնիս. մեսու, նշանակում է մարդ): Աստուածները նաեւ հարուստ և հարստութեան բաշխող էին և այս պատճառով աստուած կոչուած է նաեւ հնիս. բիազա, որից իրանեան փոխառութեամբ հայերէն բազ (հմտ. բազին, Բագաւան, Բագարատ, Բագառիճ, Բագարան): Ստուգաբանութիւնը մատնանշում են դեռ հսկ. բոգասը հարուստ և ուրոգը աղքատ:

(*) Շարունակութիւն՝ մեծանուն հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործին (Ա. Գլուխ):

կրօնական արարողութեանց, ծէսի և զոհի ու տաճարի մասին ոչ մի բառ չկայ, որ ընդհանուր լինի հնդեւրոպական լեզուներին: Սրանից պէտք է հետեւցնել թէ ուրեմն հին հնդեւրոպացիք ծէսեր կամ զոհեր չունէին, այլ թէ նրանք ցեղէ ցեղ տարբեր լինելով՝ փոխել են և իրենց անունը: Ընդհակառակը կան մի քանի կրօնական բառեր, որ ընդհանուր լինելով աւրիական, իտալական և կելտական լեզուներին, հաստատում են նրանց գոյութիւնը: Կայ զոհարեցող քահանայ նշանակութեամբ մի բառ և երբ քահանայ կայ զոհերն ու ծէսերն էլ կան:

Կրօնի և կրօնական իշխանութեան հետ կապուած էր օրէնքը. հակառակ արդի հասկացողութեան, ուր օրէնքը և դատաստանը աշխարհականացած՝ անցել է քաղաքական իշխանութեան ձեռքը:

Գեղարուեստական հասկացողութեան համար երկու բառ միայն ունինք հնիս. անգ, որ է հյ. օծանել, այս արմատը ցոյց է տալիս հնդեւրոպացոց սովորութիւնը՝ իրենց մարմինը զանազան հոտաւէտ իւղերով օծելու, ինչպէս անում են և արդի վայրենիները: Բացի սրանից արդի վայրենիների նման նրանք իրենց մարմինը ցտում, կտում կամ զանազան գոյներով ներկում էին. սրա համար էլ կայ հնիս. պէիկ արմատը:

Ահա այն տկար պատկերը՝ որ լեզուաբանութեան միջոցով կարելի է կազմել հնդեւրոպական նախաշրջանի քաղաքակրթութեան մասին: Անշուշտ այս պատկերը շատ պակասաւոր է. քաղաքակրթութեան առարկաները այն վատ կողմն ունին, որ նրանց անունը ջնջւում անհետանում է, հէնց որ մի նոր աւելի զարգացած առարկայ գալիս է փոխարինելու նրան: Այս պատճառաւ ահա շատ բան մնում է մեզ անյայտ. տրուած պատկերը պէտք է համարել միշտ իրականից շատ պակաս, այն է կարելի մինիմումը:

Կան հեղինակներ, որոնք շատ աւելի ընդարձակ, և պէտք է աւելացնել, ոմանք էլ շատ գեղեցիկ պատկեր են կազմել հնդեւրոպական «երջանիկ» նախապիճակի մասին: Այսպէս են Պիկտետ, Շրադէր, Հիրթ, Ֆայսթ, Կարմուս: Բայց դրանց մեծ մասը կամ անհաստատ ստուգաբանութեանց վրայ

հիմնուած եզրակացութիւններ են կամ համեմատական ազգագրութեան՝ որ մի շատ խախտ և անհաստատ գիտութիւն է, և կամ լաւագոյն դէպքում ներկայացնում են հնդիկների (վեդայական), յունաց (հոմերական), պարսից ու մարաց (զրադաշտական) և նման հին ժողովուրդների նախապիճակը, ինչ որ հնդեւրոպական նախացեղի նախապիճակ չի նշանակում:

ՆԵՂԵՐՈՊԱԿԱՆ ԲԱՐԲԱՆԵՐԸ ԵՒ ՆԱՅԵՐԷՆԻ ԴԻՐՔԸ ՆՐԱՆՑ ՄԻՋԵՒ(*)

Ամէն լեզու՝ որ խօսւում է մի բաւական ընդարձակ տարածութեան վրայ և քաղաքական ու կուլտուրական զանազան միջոցներով մի ընդհանուր միութիւն ստեղծելու կարողութիւն չունի, բաժանուած է լինում աւելի կամ նուազ թուով բարբառների: Այսպէս պէտք է լինէր նաև հնդեւրոպական նախալեզուն:

Ապացուցանելու համար բարբառների գոյութիւնը հնդեւրոպական նախալեզուի մէջ՝ ուրիշ միջոց չունինք եթէ ոչ երեւան հանել այլեւայլ զուգաձայններ հնդեւրոպական լեզուաւարմի 11 ճիւղերի միջև: Եթէ բոլոր լեզուաբանական երեւոյթներն էլ առանց բացառութեան բացարձակապէս նոյն ձեւով երեւան գային հնդեւրոպական լեզուաւարմի 11 ճիւղերի մէջ, բնականաբար տեղիք չէր մնալ մտածելու բարբառների գոյութեան մասին: Բայց երբ այդ երեւոյթները ընդունում են մէկից աւելի ձեւեր, այնպէս որ 11 ճիւղերից մի քանիսը հետեւում են այս ինչ ձեւին, ուրիշներ մի երկրորդի են, սրանով էլ ապացուցւում է բարբառների գոյութիւնը: Այսպէս օրյոգնակի տրականը զանազան լեզուների մէջ ներկայանում է մեզ հետեւեալ վերջաւորութիւններով. սանս. բիյաս, գնդ. բյո, լտ. բուս, օսկ. ֆս, հիոլ. իբ, գալլ. բո, յն. ֆիմ, գոթ. մ, հիթ. մուս, հայրուս.

(*) Վերցուած՝ մեծանուն հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործէն (Բ. Գլուխ):

մանա, հալ. մը, այս բոլորը վերջ ի վերջոյ վերածուած են երկու խմբի. մին որ սկսում է բն ձայնով, միւսը որ սկսում է մ ձայնով. այս երկուսը անվերածելի են, հետեւաբար և իրենց գոյութիւնը հասնում է մինչեւ հնդեւրոպական նախաշրջանը: Արդ՝ այն լեզուները որ հետեւում են բն խմբին (արիական, իտալական, կելտական և յունական) ներկայացնում են մի բարբառ, իսկ այն լեզուները՝ որ հետեւում են մ խմբին (գերմանական, բալթեան-սլաւական) ներկայացնում են մի ուրիշ բարբառ: Հնդեւրոպական նախալեզուի բարբառների ուսումնասիրութեամբ առանձնապէս զբաղել է Մելէ, հնդեւրոպական բարբառները, Փարիզ 1908: Այս աշխատութեան մէջ երեւան հանուած և քննուած են բաղմաթիւ զուգակցութիւններ, որոնք կարելի է ամփոփել այստեղ հետեւեալ ձեւով.

1. Մի խումբ բառեր գոյութիւն ունին միայն բալթիկ-սլաւական, գերմանական, կելտական և իտալական լեզուների մէջ և չկան արիական, հայ և յոյն լեզուների մէջ: Այս բառերից շատերը քաղաքակրթական նշանակութիւն ունին, ուստի և ցոյց են տալիս նոյն բարբառները կազմող ժողովուրդների առանձին զարգացումը: Այսպէս են օրինակ՝ ցանել, սերմ, հատիկ, ալիւր, ակօս, խնձոր, ընտանի խոզ, բակլայ, բորբոս, փորել, հաճար, վարսակ, տորդիկ, պլեմակ, ձիաստաց, բոյն, լաստենի, կնձնի, կարմրածառ, զարբնել, կտրել, կացին, հիւսել, ղեկ, վահան, կանթ, ժողովուրդ, օտար հիւր, պարտք, զրաւական, տիրապետել, մարդ (իրը հողածին էակ. միւսները ունին իրրեւ մահկանացու՝ մարդ), մօրուս, ողորկ, սառոյց, խօսք, մղել, հիւսիսային քամի, ճշմարտ, առատ, ծով:

2. Հնիս. կոկորդային կ և կլ ձայների դէմ իտալական, յոյն, կելտական և գերմանական լեզուները գնում են հաւասարապէս կոկորդային ձայներ, իսկ արիական, բալթիկ-սլաւական, հայ, ալբանական, ինչպէս նաև փոխգերէն ու թրակերէն լեզուները երկու ձայները զանազանելով իրարից՝ առաջինի դէմ գնում են չչական ձայներ, երկրորդը պահում են կոկորդական:

3. Հնիս. ա և օ ձայնաւորները անազարտ միում են կելտական, իտալական,

յոյն, հայ և փոխգերէն լեզուների մէջ, իսկ գերմանական, բալթիկ, ալբաներէն և արիական լեզուների մէջ երկուսն էլ դառնում են հաւասարապէս ա. սլաւական լեզուների մէջ օ, որ նշանակում է զարձեալ ա:

4. Հնիս. ss ձայնախումբը իտալական, կելտական և գերմանական լեզուների մէջ դառնում է ss, միւս լեզուների մէջ us. այսպէս նաև ալբաներէնը, իլլիրիականը, թրակերէնն ու փոխգերէնը. անյայտ է հայերէնը:

5. Բառամէջի ը ձայնը պահում է սանսկրիտ, յոյն, իտալական և կելտական, ինչպէս և թոխարական լեզուների մէջ, և ջնջւում է իրանեան, բալթիկ-սլաւական, հայ և գերմանական լեզուների մէջ:

6. Հնիս. բն, զն, դն ձայները տալիս են զանազան լեզուների մէջ թրթռուն ձայներ, միայն յոյն և իտալական ճիւղերի մէջ դառնում են խուլ և այն էլ չփական. այսպէս բն դառնում է յն. ֆ, լտ. ֆ ևն:

7. Հնիս. խուլ շնչեղները փ, ֆ, ք, անազարտ պահում են արիական ճիւղի և հայերէնի մէջ. յունարէնը պահում է միայն մասամբ. միւս բոլոր արեւմտեան լեզուները չփոթում են պարզ խուլների հետ:

8. Հնիս. ս վանկասկզբում դառնում է հն՝ հայերէն, յունարէն և իրանեան լեզուների մէջ. որոշ պարագաներում ո դառնում է օ՝ արիական, մասամբ նաև բալթիկ-սլաւական և հայերէն լեզուների մէջ, իսկ միւս արեւմտեան լեզուների մէջ այդպիսի փոփոխութիւն չկայ:

9. Բայերի կատարեալի յաւելեալ ձայնաւորը (էած, երեր) գտնւում է միայն արիական, հայ և յոյն լեզուների մէջ. միւսները չունին:

10. Բալթիկ-սլաւական, գերմանական, կելտական և թերեւս իտալական խմբերը ներկայացնում են առանց կրկնութեան կատարեալի մի ձեւ, մինչդեռ արիական և յոյն լեզուները կրկնաւոր են:

11. Ներկայի յն մասնիկը արիական և յոյն լեզուները պահում են, բալթիկ-սլաւական և հայ լեզուները վերածում են երկու կարգի՝ յն և ի, իսկ գերմանական, կելտական և իտալական լեզուները աշխատում են ջնջել:

12. Հոլովական բն - մ մասնիկները, ինչպէս ասացինք քիչ առաջ, արիական,

իտալական, կելտական, յունական և հայերէն լեզուների մէջ ունին շրթնային բն ձևեր, իսկ գերմանական և բալթիկ-սլավական լեզուների մէջ համապատասխան ուղային մ ձևեր:

13. Յոգնակի ներգոյականի համար արիական, բալթիկ-սլավական լեզուներն ունին սու մասնիկը. հայերէնը ունի ս որ կարող է կորցրած լինել ու ձայնաւորը, յոյնը ունի սի և ծառայում է նաև ուրիշ հոլոֆների համար, միւս լեզուները չունին համապատասխան մի ձև:

14. Իտալական, յոյն և հայ լեզուները ունին գոյականների մէջ օ վերջաւորութեամբ իգականներ, ինչպէս նու, սեռ. նուոյ, իսկ միւս լեզուները կամ ջնջել են դրանք և կամ վերածել ա վերջաւորութեան:

15. Արդելականը կազմելու համար արիական, հայ և յոյն լեզուները գործածում են մի՛ ձևեր, միւսները այսպիսի բան չգիտեն:

16. Կան մի խումբ բնորոշ բառեր, որոնք յատուկ են միայն արիական և բալթիկ-սլավական խմբերին և ուրիշ բառեր որ յատուկ են միայն իտալական, կելտական և գերմանական խմբերին: Բացի սրանցից կան բազմաթիւ զուգակցութիւններ իտալական և կելտական լեզուների մէջ. ինչպէս ալ դարձած կը նոյն ձայնից առաջ, օ բունների ի ձևով սեռականը որ ալլուր չկայ, ր ձևով կրաւորական, ստորադասականի երկու առանձին ձևեր, գերադրականի կազմութիւնը, որոշ բառեր որ յատուկ են միայն այս երկու խմբերին, յատկապէս ուստ և դուստ բառերի փոխանակութիւնը նոր ձևերով:

Այս բոլոր նմանութիւնները հաւաքելով մի պատկերի մէջ, կ'ունենանք հետեւեալ տախտակը:

ՊՐՈՖ. Լ. ԱՃԱՌԵԱՆ

(Շարունակելի)



Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԳԵՐ. Տ. ՄԱՄԲՐԷ Ս. ԱՐԲ. ՍԻՐՈՒՆԵԱՆ ԵՒ

ԳԵՐ. Տ. ԶԱՐԵԼ Ս. ԵՊՍ. ՓԱՅԱՍԼԵԱՆ

ՄԵՐ ՄԷՁ

21 Ապրիլի երեկոյեան Սուրբ Բաղաս ժամանեցին Եզրպտանայոց Բարեջան Առաջնորդը Գեր. Տ. Մամբրէ Ս. Արքեպս. Սիրունեան և Հալէպի Հայոց Առաջնորդ Գեր. Տ. Զարեն Ս. Եպս. Փայասլեան, որոնք ընդունուեցան, մինչև օգակայան ընդառաջ դացած, Գեր. Տեղապահ Հօր ներկայացուցիչ՝ հոգեշնորհ վարդապետ հայրերու կողմէ:

Մեզի համար յոյժ բերկրառիթ պարագայ մը եղաւ Գեր. Սրբազաններու մեր մէջ ներկայութիւնը: Գեր. Տեղապահ Հօր կարգադրութեամբ անոնք հետզհետէ նախագահեցին Ս. Զատկի մեր մեծահանգէս արարողութիւններուն, մատուցին իրենց ուխտի Սուրբ Պատարագները Տնօրինական Սրբատեղիներուն մէջ: Խօսեցան հոգեշունչ քարոզներ և մխիթարեցին մեր հաւատացեալները:

Գեր. Տ. Զարեն Սրբազան կատարեց ձեռնադրութիւնը մեր հինգ սարկաւազներուն և զգլիւններուն, որոնց մասին անդրադարձած ենք առանձինն «Սրտն» ներկայ թիւին մէջ:

Ս. Զատկի տօնակատարութիւններէն ետք Գեր. Տ. Մամբրէ Սրբազան մեկնեցաւ զէպի Գահրէ 3 Մայիսին, իսկ Տ. Զարեն Սրբազան՝ զէպի Հալէպ 8 Մայիսին:

ՁԵՌՆԱԿՐՈՒԹԻՒՆՆԵՐ Ս. ԱՌՈՒԷՆ ՆԵՐՍ

5 Մայիս Շարաթ, ի ժամ Ս. Պատարագի, որ մատուցուեցաւ Ս. Գլխադրի մատրան մէջ Հօգ. Տ. Պարգեւ Վրդ. Վրթանէսեանի կողմէ, Գեր. Տ. Զարեն Ս. Եպս. Փայասլեան կատարեց ժառանգաւորաց Վարժարանէն ետքը սաներու և Ս. Ուխտիս երկու աշխատաւոր Միարան եղբայրներու ձեռնադրութիւնը, շնորհելով անոնց զըզրութեան Հօրն աստիճաններ: Արարողութեան ընթացքին խարտաւիլակի պաշտօնը կը կատարէր Ժառանգաւորաց Վարժարանի և լնծայարանի բարեջան առժ. տեսուչը՝ Հօգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան:

Դպիւրներու ձեռնադրութենէն յետոյ, Գեր. Սրբազանը կատարեց նաև Ժառանգաւորաց Վարժարանէն ընթացաւորտ երեք սաներու, Սիմօն Սվաճեանի, Վահան Դալֆայեանի և Դէորդ Դըպըլեանի սարկաւազական ձեռնադրութիւնը որոնց ընկերացած էին նաև Ս. Յարութեան Տաւաթի ուրարակիւրներէն՝ Տիւր. Յովսէփ Նազարեան և քահանայացու Տիւր. Յարութիւն Սէփտալեան: Խարտաւիլակի պաշտօնը կը կատարէր